ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2016թ. N---- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Լյուքսեմբուրգի փողոցի հ. 13 շենքի հ. 32՝ 74.9 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ. 03102014-01-0002 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Վարդիթեր Հրաչիկի Քամալյանին (ծնվ. 1967թ.), Գեննադի Հովհաննեսի Սարուխանյանին (ծնվ. 1986թ.), Ազնիվ Հովհաննեսի Սարուխանյանին (ծնվ. 1988թ.), Արման Հովհաննեսի Սարուխանյանին (ծնվ. 1997թ.), Զարուհի Արարատի Ղարիբյանին (ծնվ. 1985թ.) և Մարիա Գեննադիի Սարուխանյանին (ծնվ. 2012թ.):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման նախապատրաստման համար հիմք է հանդիսացել Վարդիթեր Քամալյանի Լյուքսեմբուրգի փողոցի հ.13 շենքի հ.32՝ 74.9քմ ընդհանուր մակերեսով բնակարանն իր ընտանիքի անվամբ մասնավորեցնելու վերաբերյալ դիմումը:

Քննարկվող բնակարանը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.03102014-01-0002 վկայականի հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Լյուքսեմբուրգի փողոցի հ.13 շենքի հ.32 բնակարանը համաձայն աշխատավորների դեպուտատների Երևանի Սովետական շրջսովետի գործադիր կոմիտեի 01.04.1974թ հ.4741 օրդերի տրամադրվել է Վարդիթեր Քամալյանի ամուսնու՝ Հովհաննես Սարուխանյանի ընտանիքին: Օրդերում նշված՝ Հովհաննես Սարուխանյանը, հայրը՝ Գենիկ Հովհաննեսի Սարուխանյանը, մայրը՝ Ազնիվ Միտուշի Սարուխանյանը մահացել են (մահվան վկայականներ 11.01.2013թ. հ.117676, 22.07.2014թ. հ.161476 և ՀՀ Տավուշի մարզի Աչաջրի գյուղապետարանի կողմից 18.08.2016թ. տրված տեղեկանք), իսկ քույրերը՝ Կարինե և Նարինե Սարուխանյանները և եղբայրը՝ Ռոբերտ Սարուխանյանը օրենքով սահմանված կարգով դուրս են եկել հաշվառումից:

Համաձայն «Էգան» համատիրության 13.04.2016թ տեղեկանքի՝ Վարդիթեր Քամալյանը ամուսնությունից հետո, սկսած 1986 թվականից բնակվում է Լյուքսեմբուրգի փողոցի հ. 13 շենքի հ. 32 բնակարանում: Համաձայն բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին 17.09.2015թ. հ. 457341 տեղեկանքի՝ Վարդիթեր Քամալյանը 1986 թվականից հաշվառված է վերը նշված հասցեում, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով չի կարողացել սեփականաշնորհել բնակարանը: Քննարկվող բնակարանում Վարդիթեր Քամալյանի հետ միասին բնակվում են նրա երեխաները՝ Գեննադի Սարուխանյանը, Ազնիվ Սարուխանյանը, Արման Սարուխանյանը, հարսը՝ Զարուհի Ղարիբյանը և թոռը՝ Մարիա Սարուխանյանը:

Համաձայն ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման ղեկավարի 25.07.2016թ. հ.ԼԱ-2/5673 և 09.8.2016թ. հ.ԼԱ-2/6213 գրությունների՝ Վարդիթեր Հրաչիկի Քամալյանի, Գեննադի Հովհաննեսի Սարուխանյանի, Ազնիվ Հովհաննեսի Սարուխանյանի, Արման Հովհաննեսի Սարուխանյանի, Զարուհի Արարատի Ղարիբյանի անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և վերջին հինգ տարվա ընթացքում որևէ անշարժ գույքի օտարում, կամ ձեռք բերում չի գրանցվել:

Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 451-Ն որոշման հավելվածի (Ծրագրի) 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի (Ծրագրի) 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ